



«ԵՐԵՎԱՆԻ ՆԵՐՍԵՍ ՄԵԾԻ ԱՆՎԱՆ
Հ.124 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ԴԱՍԴԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

2022 – 2023 ուստարի

ԴԱՍԱՐԱՆ՝

VIII^բ

ՈՒՍՈՒՑԻՉ՝

L. Տերյան

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՈւՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՈւՍԱՐԿԱ ԸՆԹԱՅՔՈՒՄ

Ուսումնադաստիարակչական աշխատանքները պետք է բխեն երեխաների տարիքային առանձնահատկություններից: Այս աշխատանքները պետք է բարձրացնեն ուսման որակը և նպաստեն ճիշտ և պիտանի քաղաքացիներ դաստիարակելուն: Այս աշխատանքները նպատակային և արդյունավետ կլինեն մշտապես պահպանելով դպրոց-ծնող-ուսուցիչ համագործակցությունը:

2. ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հոգևոր դաստիարակությունը նպաստում է աշակերտների մեջ ձևավորել ազգային արժանապատվության գաղափարը: Դասղեկի ժամերին պետք է խոսել հոգևոր արժեքների ձևավորման մասին: Հոգևոր դաստիարակությունը դաստիարակության համակարգի կարևոր բաղադրամասերից է: Նպաստում է աշակերտների մեջ ձևավորել ազգային արժեքներ:

3. ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Աշակերտների մոտ ձևավորել և զարգացնել գեղագիտական ճաշակ: Այդ նպատակով զրույցի միջոցով նրանց հաղորդել տեղեկատվություն մարդկանց կյանքում գեղեցիկի դերի մասին, ինչպես նաև ընձեռել հնարավորություն ինքնարտահայտվելու:

4. ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք հայրենիքի, ակնածանք հայ ազատամարտիկների և ֆիդայիների նկատմամբ: Ծանոթացնել հայ ազատամարտիկների կյանքի պատմությանը, քննարկել երեխաների ուշադրությունը կենտրոնացնելով բնավորության այնպիսի գծերի վրա, որտեղ ակներև է հայրենասիրությունը: Սովորեցնել ռազմահայրենասիրական երգեր:

5. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Նպաստել երեխաների ֆիզիկական պատրաստվածության զարգացմանը, բացատրել մարմինը ֆիզվարժությունների և հնարների միջոցով կոփելու կարևորությունը, ինչպես նաև նպաստել վնասակար սովորություններից գերծ մնալու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

6. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Աշակերտների մոտ սերմանել սեր աշխատանքի և աշխատավոր մարդու նկատմամբ, ձևավորել և զարգացնել աշխատանքային հմտությունները և կառուցողական մոտեցում: Աշխատանքը աշակերտի կողմից պետք է դիտարկվի որպես կյանքի և գոյատևման աղբյուր:

7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Զրույցի միջոցով երեխաների մոտ ձևավորել հոգատար վերաբերմունք բնության նկատմամբ: Ներկայացնել բնապահպանական խնդիրներ, նշել դրանց վտանգավորության և բնության պահպանման կարևորության մասին:

8. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Դպրոց - ընտանիք սերտ կապը նպաստում է երեխաների ավելի լավ սովորելուն, իսկ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

	Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիրակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետ
1		Նոր ուստարվա անելիքների ծրագրում:	
2		Մարմնակրթություն, առողջապահություն: Հիգիենիկ հարցեր:	
3		Հայրենիք, ազգ, մայրենի լեզու:	
4		Անկախության անգնահատելի դերն ինձ համար:	
5		Խաղաղության մշակույթ:	
6		Հանդուրժողականության սահմանում:	
7		Անհանդուրժողականության դրսևորումները	
8		Ներողամտություն, թե վրեժխնդրություն	
9		Աշխարհընկալում: Ես հարգում եմ նաև թո կարծիքը: Փոխըմբռնում:	
10		Հոգու կրթություն և մտքի թռիչք:	
11		Ինչպե՞ս նայել ճշմարտության աչքերին:	
12		Առաջին կիսամյակի ուսումնական արդյունքների վերանայում:	
13		Ամանորյա ջերմ մաղթանքներ և բացիկներ:	
14		Հայրենի՛ք, ես զարկն եմ թո բազկի:	
15		Հայոց բանակ:	

